

ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա ՍԱԿԱՐԴԱԿ

1

Ինչպե՞ս է փոխվում մարմնի արագությունն ուղղագիծ հավասարաչափ շարժման ժամանակ:

- 1) Ուղղությունը մնում է հաստատուն, իսկ մոդուլն անընդհատ մեծանում է:
- 2) Ուղղությունն անընդհատ փոփոխվում է, իսկ մոդուլը մնում է հաստատուն:
- 3) Ուղղությունը և մոդուլը մնում են հաստատուն:
- 4) Փոխվում են ուղղությունը և մոդուլը:

2

Ինչպե՞ս կփոխվի *h* բարձրությունից հորիզոնական ուղղությամբ նետված մարմնի քոիչքի տևողությունը, եթե սկզբնական արագությունը մեծանա 2 անգամ: Օդի դիմադրությունն աճտեսել:

- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Չի փոխվի:
- 4) Կփոքրանա 4 անգամ:


3

Ինչպե՞ս կշարժվի մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե ժամանակի որևէ պահից սկսած՝ նրա վրա ազդող բոլոր ուժերի համազորը հավասարվի զրոյի:

- 1) Կշարունակի շարժվել այդ պահին ունեցած արագությամբ:
- 2) Կկատարի հավասարաչափ դանդաղող շարժում:
- 3) Կշարունակի շարժվել նախկին արագացմամբ:
- 4) Ակնթարթորեն կանգ կառնի:

4

Խ առանցքի ուղղությամբ հավասարաչափ շարժվող մարմնի վրա սկսում է ազդել ուժ, որի պրոյեկցիայի՝ ժամանակից կախված փոփոխությունը տրված է գրաֆիկում: Ժամանակի ո՞ր միջակայքերում է մարմինը շարժվում հավասարաչափ:




- 1) 1–2 վ միջակայքում:
- 2) 2–5 վ միջակայքում:
- 3) 0–1վ միջակայքում:
- 4) 0–1վ և 2–5 վ միջակայքերում:

5 Որքա՞ն է m զանգվածով տղայի կշիռը դեպի ներքև ուղղված և արագացումով շարժվող վերելակում ($a < g$):

- 1) $P = mg$:
- 2) $P = m(g - a)$:
- 3) $P = m(g + a)$:
- 4) $P = m(a - g)$:


6 Որքա՞ն է պատիճ հենված սանդուղքի վրա հատակի հակագդեցության \vec{N} ուժի մոմենտը B կետով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ:



- 1) $N \cdot BC$:
- 2) $N \cdot AC$:
- 3) $N \cdot AB$:
- 4) 0 :

7 Նկարում պատկերված գնդերից ո՞րն է կայուն հավասարակշռության վիճակում:

- 1) A գունդը:
- 2) B գունդը:
- 3) C գունդը:
- 4) Բոլոր գնդերը:



8 Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Ճնշումը հավասար է ...

- 1) տվյալ մակերևույթի վրա ազդող ուժի և այդ մակերևույթի մակերեսի հարաբերությանը:
- 2) տվյալ մակերևույթի վրա ազդող ուժի և այդ մակերևույթի մակերեսի արտադրյալին:
- 3) տվյալ մակերևույթի վրա ազդող ճնշման ուժին:
- 4) տվյալ մակերևույթի վրա ազդող ճնշման ուժի և այդ մակերևույթի մակերեսի հարաբերությանը:

- 9) ρ խտությամբ համասեռ մարմինը լողում է ρ_0 խտությամբ հեղուկի մակերևույթին: Ο՞րն է մարմնի ամքող V ծավալի և ընկդմված մասի V_1 ծավալի ճիշտ հարաբերակցությունը:

1) $\frac{V}{V_1} = \frac{\rho}{\rho_0}$:

2) $\frac{V}{V_1} = \frac{\rho_0}{\rho}$:

3) $\frac{V}{V_1} > \frac{\rho_0}{\rho}$:

4) $\frac{V}{V_1} < \frac{\rho_0}{\rho}$:

- 10) Ο՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Այն ամենափոքր ժամանակը, որից հետո տատանումները կրկնվում են, կոչվում է...


- 1) տատանումների հաճախություն:
2) տատանումների պարբերություն:
3) տատանումների լայնույթ:
4) տատանումների փուլ:

- 11) Տրված է ալիքի հավասարումը՝ $y = 4 \sin[2\pi(t - 2x)]$, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է ալիքի երկարությունը:

- 1) 4 մ:
2) 2 մ:
3) 1 մ:
4) 0,5 մ:

- 12) Ο՞ր գրաֆիկներն են պատկերում հաստատուն զանգվածով իդեալական զազի իզոբար պրոցես:

- 1) Սիայն ա-ն:
2) Սիայն գ-ն:
3) ա-ն և թ-ն:
4) գ-ն և դ-ն:



13

Կվիլսվի՞ արդյոք հաստատուն զանգվածով իրական գազի ներքին էներգիան իզոբերմ պրոցեսում:

- 1) Ω_z , քանի որ այն կախված է միայն գազի ջերմաստիճանից:
- 2) Ω_z , քանի որ այն կախված է միայն գազի զանգվածից:
- 3) Այո, քանի որ այն կախված է գազի ծավալից և ջերմաստիճանից:
- 4) Այո, քանի որ այն կախված է գազի ճնշումից:

14

Ω^o բանաձևով է որոշվում m զանգվածով մարմնի c տեսակարար ջերմունակությունը, եթե Q ջերմաքանակ հաղորդելիս նրա ջերմաստիճանը t_1 -ից աճում է մինչև t_2 :

Ազրեգատային վիճակի փոփոխություն տեղի չի ունենում:

$$1) c = \frac{Q}{m(t_2 + t_1)} :$$

$$2) c = \frac{Q}{m(t_2 - t_1)} :$$

$$3) c = \frac{Q}{m(t_1 - t_2)} :$$

$$4) c = \frac{2Q}{m(t_1 + t_2)} :$$

15

Հալման T ջերմաստիճանում m զանգվածով բյուրեղային մարմնին Q ջերմաքանակ հաղորդելիս այն փոխարկվեց հեղուկի: Ω^o արտահայտությամբ է որոշվում մարմնի հալման տեսակարար ջերմությունը:

$$1) \frac{Q}{mT} :$$

$$2) \frac{Q}{m} :$$

$$3) \frac{mT}{Q} :$$

$$4) \frac{m}{Q} :$$

16

Հնարավո՞ր է, որ զազը կատարի ավելի մեծ աշխատանք, քան նրա ստացած ջերմաքանակն է:

- 1) Ω_z , հնարավոր չէ:
- 2) Հնարավոր է. այդ դեպքում նրա ներքին էներգիան չի փոխվում:
- 3) Հնարավոր է. այդ դեպքում նրա ներքին էներգիան փոքրանում է:
- 4) Հնարավոր է. այդ դեպքում նրա ներքին էներգիան մեծանում է:


17

Ո՞ր բանաձևն է արտահայտում ջերմային մեքենայի ջեռուցիչի տված Q_1 և սառնարանին հաղորդված Q_2 ջերմաքանակների կապը, եթե ջերմային մեքենայի ՕԳԳ-ն η է:

- 1) $Q_1 = (1 - \eta)Q_2$:
- 2) $Q_2 = (1 - \eta)Q_1$:
- 3) $Q_1 = (1 + \eta)Q_2$:
- 4) $Q_2 = (1 + \eta)Q_1$:

18

Եթե բարակ թելի երկու ծայրերն ամրացնենք օղակին և մտցնենք օճառաջրի մեջ, ապա այն կպատվի քաղանքով: Ինչպես կփոխվի A մասի մակերեսը, եթե B մասի քաղանքը վերացնենք:



- 1) Կմնանա:
- 2) Կփոքրանա:
- 3) Կմնա նույնը:
- 4) Պատասխանը կախված է հեղուկի տեսակից:

19

Ո՞ր բանաձևով են որոշում համասեռ զլանաձև ձողի k կոշտության կախումը նրա l_0 երկարությունից, լայնական հատույքի S մակերեսից և նյութի առաձգականության E մոդուլից:

- 1) $k = ESL_0$:
- 2) $k = E \frac{S}{l_0}$:
- 3) $k = E \frac{l_0}{S}$:
- 4) $k = \frac{S}{El_0}$:

20


Ապակե ձողը շփեցին մետաքսով: Որքա՞ն է ապակու և մետաքսի վրա առաջացած լիցքերի հարաբերությունը, եթե սկզբում դրանք էլեկտրաչեղոք են:

- 1) -1:
- 2) 1:
- 3) 0:
- 4) 2:

21

Սետաղե գնդային մակերևույթին հաղորդվել է q լիցք: Ի՞նչ առընչություն գոյություն ունի A , B , C և D կետերում դաշտի լարվածության մոդուլների միջև:

- 1) $E_A = E_B = E_C = E_D$:
- 2) $E_A > E_B$, $E_C > E_D$:
- 3) $E_A < E_B$, $E_C < E_D$:
- 4) $E_A = E_B = 0$, $E_C > E_D$:



22


Ո՞ր բանաձևն է ճիշտ արտահայտում հաղորդչի դիմադրության կախումը նրա l երկարությունից և լայնական հատույթի S մակերեսից:

- 1) $R = \rho \frac{l}{S}$:
- 2) $R = \rho \frac{S}{l}$:
- 3) $R = \frac{S}{\rho l}$:
- 4) $R = \frac{l}{\rho S}$:

23

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:


- 1) $\frac{2}{3}R$:
- 2) $\frac{3}{4}R$:
- 3) $\frac{4}{5}R$:
- 4) $\frac{5}{6}R$:



24

Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հաստատուն հոսանքի աղբյուր պարունակող փակ շղթայում անջատված լրիվ հզրության կախումն արտաքին դիմադրությունից:

- 1) w :
- 2) p :
- 3) q :
- 4) η :



25

ε ΕζΩι και r οιρρηση ημιμαρποτεργιανη πινεποη λησωνηρη αηργητηρηση μηιαδηση δι R αρτωρηση ημιμαρποτεργιανη: Η^ονις δι αριστωνηληση $\varepsilon^2 R / (R + r)^2$ μηδηπιτερηση:

- 1) ζηυαնքի ուժը շղթայում:
 - 2) Շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունը:
 - 3) Շղթայում անջատված լրիվ հզորությունը:
 - 4) Լարումը հոսանքի աղբյուրի սեղմակներում:

26

Ո՞ր արտահայտությամբ է որոշվում էլեկտրոլիզի ընթացքում էլեկտրոդի վրա անջատված նյութի ասոմների թիվը, եթե e -ն տարրական լիցքն է, n -ը՝ արժեքականությունը, I -ն՝ հոսանքի ուժը, t -ն ժամանակը:

- 1) $\frac{It}{ne}$:
 - 2) $\frac{en}{It}$:
 - 3) $\frac{Itn}{e}$:
 - 4) $\frac{I}{net}$:

27


Գազապարպումային խողովակում էլեկտրոնի ազատ վագրի երկարությունը / Է: Ի՞նչ կիմետրիկ էներգիա ձեռք կրերի էլեկտրոնն այդ ընթացքում, եթե կիրառված էլեկտրոական դաշտի լարվածությունը E է:

- 1) $eE :$
 - 2) $eEl :$
 - 3) $eE/l :$
 - 4) $eEl^2 :$

28


Առաջին երկու վայրկյանում մազնիսը մոտեցնում էն մետաղե շրջանակին, հաջորդ երկու վայրկյանին մազնիսն անշարժ պահում էն շրջանակի ներսում, իսկ վերջին երկու վայրկյանի ընթացքում այն հեռացնում էն շրջանակից: Ω° րդեաբում է շրջանակում մակածվում ԷլՇՈւ:

- 1) Սիայն մագնիսը մոտեցնելիս:
 - 2) Սիայն մագնիսը հեռացնելիս:
 - 3) Շրջանակի ներսում մագնիսն անշարժ պահելիս:
 - 4) Մոտեցնելիս և հեռացնելիս:



29

Մետաղե շրջանակում մագնիսական հոսքը փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի ո՞ր միջակայքում կռնտուրում ԷլՇՈւ չի մակածվում:



- 1) ա միջակայքում:
- 2) թ միջակայքում:
- 3) զ միջակայքում:
- 4) Բոլոր միջակայքերում ԷլՇՈւ-ն ունի միևնույն արժեքը:


30

Կոճի ինդուկտիվությունը մեծացրին 2 անգամ, իսկ հոսանքի ուժը նրա մեջ փոքրացրին 2 անգամ: Ինչպես փոխվեց այդ դեպքում կոճի մագնիսական դաշտի էներգիան:

- 1) Մեծացավ 8 անգամ:
- 2) Փոքրացավ 2 անգամ:
- 3) Փոքրացավ 4 անգամ:
- 4) Փոքրացավ 8 անգամ:

31

Ինչպես կփոխվի կենտուրում սեփական էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը, եթե բանալին ա դիրքից տեղափոխենք Ե դիրք:



- 1) Կմեծանա 4 անգամ:
- 2) Կմեծանա 2 անգամ:
- 3) Չի փոխվի:
- 4) Կփոքրանա 2 անգամ:


32

Փոփոխական հոսանքի շղթայում հոսանքը փոխվում է $i(t) = 2 \cos(100\pi t)$ օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են ՍՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է հոսանքի ուժի լայնութային արժեքը:

- 1) 2 U:
- 2) 100 U:
- 3) 200π U:
- 4) 200 U:

33

Նկարում պատկերված են ընկնող և բեկված ճառագայթները A միջավայրից B միջավայրն անցնելիս: Ω°րն է այդ միջավայրերի n_A և n_B բեկման ցուցիչների ճիշտ հարաբերակցությունը:



- 1) $n_A > n_B$:
- 2) $n_A < n_B$:
- 3) $n_A = n_B$:
- 4) Հարաբերակցությունը կախված է անկման անկյունից:

34

Դադարի վիճակում մասնիկի կյանքի տևողությունը τ_0 է: Որքա՞ն կլինի այդ մասնիկի կյանքի տևողությունը հաշվարկման այն համակարգում, որի նկատմամբ մասնիկը շարժվում է v արագությամբ:

- 1) $\tau = \frac{\tau_0}{\sqrt{1 - v^2 / c^2}}$:
- 2) $\tau = \tau_0$:
- 3) $\tau = \tau_0 \sqrt{1 - v^2 / c^2}$:
- 4) $\tau = \tau_0 \sqrt{1 + v^2 / c^2}$:

35

Ω°րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
λ ալիքի երկարությամբ էլեկտրոնագնիսական ալիքի ֆուսոնի էներգիան համեմատական է...

- 1) $\frac{1}{\lambda^2}$:
- 2) λ^2 :
- 3) λ :
- 4) $\frac{1}{\lambda}$:


36

ν հաճախության լույսով մետաղը լուսավորելիս նրանից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան E է: Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը:

- 1) $E - h\nu$:
- 2) $E + h\nu$:
- 3) $h\nu - E$:
- 4) $h\nu$:

37

Նկարում պատկերված α -մասնիկը շարժվում է դեպի
ատոմի միջուկը: Ω° թիստագծով կշարժվի
 α -մասնիկը միջուկից ցրվելուց հետո:



- 1) A:
- 2) B:
- 3) C:
- 4) D:

38

Ի՞նչ և իածախորյան ֆոտոն է ճառագայթում ատոմը, եթե այն E_2 էներգիայով
զրգոված վիճակից անցնում է E_1 էներգիայով իմնական վիճակի:

- 1) $\frac{E_2}{h}$:
- 2) $\frac{E_1}{h}$:
- 3) $\frac{E_2 + E_1}{h}$:
- 4) $\frac{E_2 - E_1}{h}$:

39

Քանի էլեկտրոն է պարունակում ալյումինումի $^{27}_{13}Al$ չեղոք ատոմը:

- 1) 27:
- 2) 13:
- 3) 40:
- 4) 0:

40

Ի՞նչ մասնիկ է առաջանում $^9Be + ^1H \rightarrow ^{10}B + ?$ միջուկային ռեակցիայի հետևանքով:

- 1) Πրոտոն:
- 2) Նեյտրոն:
- 3) α -մասնիկ:
- 4) γ քվանտ:

41

v_0 արագությամբ շարժվող m զանգվածով գունդը բախվում է նույն զանգվածով անշարժ գնդին: Բախումը կենտրոնական է և բացարձակ առաձգական: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

1. Բախման արդյունքում համակարգի իմպուլսը փոքրանում է:
2. Բախման արդյունքում համակարգի ընդհանուր մեխանիկական էներգիան չի փոխվում:
3. Բախումից հետո համակարգի կինետիկ էներգիան $mv_0^2/2$ է:
4. Բախումից հետո գնդերը շարժվում են միևնույն ուղղությամբ:
5. Բախումից հետո երկրորդ գունդը սկսում է շարժվել v_0 արագությամբ:
6. Բախումից հետո երկրորդ գունդը սկսում է շարժվել առաջին գնդի շարժման սկզբնական ուղղությամբ:

42

Որքա՞ն էներգիա կպահանջվի 20 կգ 100°C ջերմաստիճանի ջուրը գոլորշու փոխարկելու համար: Ջրի շոգեգոյացման տեսակարար ջերմությունը $2,3 \cdot 10^6$ J/kg է: Պատասխանը բազմապատկել 10^{-6} -ով:

43

4 Օմ դիմադրությամբ հաղորդչում հոսանքի ուժը 2 A է: Որքա՞ն աշխատանք է կատարում հոսանքը 10 վ-ում:

44

Ի՞նչ անկման անկյան դեպքում են ընկնող և անդրադարձ ճառագայթները կազմում 120° անկյուն:

45


Ի՞նչ առավելագույն կինետիկ էներգիա են ունենում լիքիումից պոկված էլեկտրոնները՝ 10^{15} Հց հաճախությամբ լույսով ճառագայթելիս: Լիքիումի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը $3,84 \cdot 10^{-19}$ Ω է: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ $\Omega\text{-v}$ է: Պատասխանը բազմապատկել 10^{21} -ով:

Բ ՍԱԿԱՐԴԱԿ

46

Աշակերտը կարմիր և կապույտ լույսի երկու ճառագայթների նեղ փնջերը միևնույն ուղղի երկայնքով ուղղեց օդում գտնվող ապակե եռանկյուն արիզմայի վրա, ինչպես ցույց է տրված նկ. 1-ում: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

1. Պրիզմայի բեկող անկյունը δ -ն է:
2. Պրիզման անցած ճառագայթներից կարմիրը 1-ն է:
3. Կարմիր ճառագայթի շեղման անկյունը γ -ն է:
4. Ճառագայթի շեղման անկյունը պրիզման անցնելիս կախված չէ պրիզմայի բեկող անկյունից:
5. Ճառագայթի շեղման անկյունը պրիզման անցնելիս կախված է պրիզմայի բեկման ցուցչից:
6. Ճառագայթի շեղման անկյունը պրիզման անցնելիս կախված է լույսի ալիքի երկարությունից:



Նկ. 1

(47-48) Երկու գնացքներ շարժվում են իրար ընդառաջ 72 կմ/ժ և 54 կմ/ժ արագություններով: Առաջին գնացքում նատած ուղևորը նկատեց, որ երկրորդ գնացքն իր մոտով անցավ 10 վ-ում:

47

Որքա՞ն է երկրորդ գնացքի հարաբերական արագությունն առաջին գնացքի նկատմամբ:

48

Որքա՞ն է երկրորդ գնացքի երկարությունը:

(49-50) Իդեալական ջերմային մեքենան, որի սառնարանի ջերմաստիճանը 7°C է, ջեռուցչից ստացած յուրաքանչյուր 1000 Ω էներգիայի հաշվին կատարում է 300 Ω աշխատանք:

49 Որքա՞ն է մեքենայի O.Q.-ն՝ տոկոսներով:

50 Որքա՞ն է մեքենայի ջեռուցչի ջերմաստիճանը (ըստ Կելվինի սանդղակի):

(51-52) $2 \cdot 10^{-3}$ կգ զանգվածով և $3 \cdot 10^{-8}$ Կլ լիցքով մասնիկի արագությունը էլեկտրաստատիկ դաշտում երկու կետերի միջև տեղափոխվելիս 0,02 մ/վ-ից դարձավ 0,1 մ/վ:

51 Որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրաստատիկ դաշտը մասնիկն այդ կետերի միջև տեղափոխվելիս: Պատասխանը բազմապատկել 10^7 -ով:

52 Որքա՞ն է այդ կետերի պոտենցիալների տարբերությունը:

(53-54) Լույսի ճառագայթը 60^0 անկյան տակ ընկնում է երկու քափանցիկ միջավայրերի քաժանման սահմանին: Երկրորդ միջավայրի բեկման ցուցիչը $\sqrt{3}$ է: Հայտնի է, որ անդրադարձած և բեկված ճառագայթները փոխուղղահայց են:

53 Որքա՞ն է բեկման անկյունը:

54 Որքա՞ն է առաջին միջավայրի բեկման ցուցիչը:

- (55-56) Դադարի վիճակում գտնվող ջրածնի ատոմը $-3,4$ էՎ էներգիայով գրգռված վիճակից անցավ $-13,6$ էՎ էներգիայով վիճակի: Լույսի արագությունը վակուումում $3 \cdot 10^8$ մ/վ $\hbar: 1$ էՎ $= 1,6 \cdot 10^{-19}$ Զ:


55

Որքա՞ն է ատոմի ճառագայթած ֆուտոնի էներգիան՝ արտահայտված զուլմերով: Պատասխանը բազմապատկել 10^{21} -ով:

56

Որքա՞ն է ֆուտոնի՝ ատոմին հաղորդած իմպուլսը: Պատասխանը բազմապատկել 10^{29} -ով:

- (57-59) Ողորկ սկավառակը $\omega = 4$ ռադ/վ անկյունային արագությամբ պտտվում է ուղղաձիգ առանցքի շուրջը (նկ. 2): Սկավառակի պտտման առանցքին հողակապով ամրացված է $L = 0,5$ մ երկարությամբ ծող: Չողի ազատ ծայրին ամրացված 20 կգ զանգվածով գնդիկը հենված է սկավառակին և պտտվում է նրա հետ: Չողը սկավառակի մակերևույթի հետ կազմում է $\alpha = 60^\circ$ անկյուն: Ազատ անկման արագացումը 10 մ/վ² է: Ընդունել $\sqrt{3} = 1,7$:



57

Որքա՞ն է գնդիկի արագացումը:

58

Որքա՞ն է ծողի լարման ուժը:

59

Որքա՞ն է սկավառակի վրա ազդող գնդիկի ճնշման ուժը:

(60-62) Երբ առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 0,36 մ է, նրա մեջ առարկայի պատկերի բարձրությունը 0,1 մ է: Ոսպնյակից առարկայի հեռավորությունը 0,12 մ-ով փոքրացնելիս պատկերի բարձրությունը մեծանում է երկու անգամ: Պատկերները երկու դեպքում էլ իրական են:

60

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10^2 - ով:

61

Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումն առարկան մոտեցնելուց հետո:

62

Սկզբանականի համեմատությամբ քանի՞ անգամ կմեծանա պատկերը, եթե առարկան ոսպնյակին մոտեցնեմք 20 սմ-ով:

(63-66) Օղով լցված, երկու ծայրերը փակ, 0,8 մ երկարությամբ, հորիզոնական դիրքով դրված խողովակը բաժանված է երկու հավասար մասերի 0,4 կգ զանգվածով և $2 \cdot 10^{-2} \text{ m}^2$ մակերեսով շարժական միտցով: Եթե խողովակը պտտում են իր ծայրերից մեկով անցնող ուղղաձիգ առանցքի շուրջը 4 ռադ/վ անկյունային արագությամբ, միտցը տեղաշարժվում է 0,1 մ-ով: Միտցի հաստությունը և խողովակի պատերի հետ միտցի շփումն անտեսել:

63

Որքա՞ն է միտցի արագացումը խողովակը ուղղաձիգ առանցքի շուրջը պտտելիս:

64

Որքա՞ն է խողովակի երկու մասերի ճնշումների տարբերությունը խողովակը պտտելիս:

65

Որքա՞ն է ճնշումը խողովակում մինչև այն պտտելը:

66

Որքա՞ն է ճնշումը խողովակի պտտման առանցքից հեռու տեղամասում:

(67-70) Էլեկտրական դաշտում հաճախտի վիճակից արագացված պրոտոնը մտնում է մագնիսական դաշտ, ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Մագնիսական դաշտում պրոտոնը շարժվում է $0,2$ մ շառավղով աղեղով: Պրոտոնի շարժման արագության ուղղությունը 10^7 Վ-ի ընթացքում փոխվում է 45° -ով: Պրոտոնի զանգվածն ընդունել $1,6 \cdot 10^{-27}$ կգ, լիցքը՝ $1,6 \cdot 10^{-19}$ Կլ: Ընդունել՝ $\pi=3$:

67

Որքա՞ն է պրոտոնի պտտման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^7 -ով:

68

Որքա՞ն է պրոտոնի շարժման արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-5} -ով:

69

Որքա՞ն է պրոտոնին արագացնող պոտենցիալների տարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-1} -ով:

70

Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիան: Պատասխանը բազմապատկել 10^3 -ով: